

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«27» 01 2022թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ ԳԱԱ), ի դեմս ԳԱԱ նախագահ Աշոտ Սաղյանի, որը գործում է ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Արգամ Հովսեփյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով նախատեսված 211608800 (երկու հարյուր տասնմեկ միլիոն վեց հարյուր ութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, Ծրագրի առաջադրանքը, այդ թվում՝ նպատակը, օրացուցային պլանը, այդ թվում՝ ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ԳԱԱ –ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.2.4 Սույն Պայմանագրի Հավելված 5-ով «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման» ծրագրի իրականացմանը ներգրավված աշխատողների մասին ներկայացված տեղեկատվության Պայմանագրի գործողության ժամանակահատվածում փոփոխվելու՝ աշխատողների փաստացի քանակի նվազման կամ ավելացման կամ լրացուցիչ պարտականությունների ավելացման դեպքում Կազմակերպությունն իրավունք ունի Պայմանագրով նախատեսված աշխատավարձի ընդհանուր ֆոնդի շրջանակներում կատարել աշխատավարձի ֆոնդի վերաբաշխում աշխատողների փաստացի անվանացանկի համապատասխան:

2.3 ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ԳԱԱ-ին,

2.4.6 ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ԳԱԱ-ի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 24-ը:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 211608800 (երկու հարյուր տասնմեկ միլիոն վեց հարյուր ութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:

4. Մոնիթորինգ

4.1 ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե

անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:


9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 .Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները



Հայաստանի Հանրապետության
գիտությունների ազգային ակադեմիա
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ՝ 900018005182
ՀՎՀՀ 00005673

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների
ազգային բյուրո» ՊՈԱԿ
ք. Երևան, Իսակովի պող. 24
Երևանի թիվ 1 ՏԳԲ
ՀՀ՝ 900018005588
ՀՎՀՀ՝ 01836525


Նախագահ՝ Ա.Սադյան


(ստորագրություն)

Վ. Տ.

Տնօրեն՝ Ա. Հովսեփյան


(ստորագրություն)

Վ. Տ.

Ծրագրի գիտական ղեկավար՝


(ստորագրություն)

Պ.Ոսկանյան (Տնօրենի տեղակալ գիտության գծով)
(անուն ազգանուն (պաշտոն))

Փաստաթղթի նախապատրաստման
համար պատասխանատուներ՝

Տնօրենի տեղակալ ֆինանսական և տնտեսական հարցերի գծով Խ.Աբաջյան, հեռ. 77-77-10 (*222)

Իրավաբանական բաժնի պետ Է.Տիտանյան, հեռ. 77-77-10 (*129)

Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ - գլխավոր հաշվապահ Ռ. Պապիկյան, հեռ. 77-77-10 (*117)

Գիտական հետազոտությունների և տեխնիկական փորձարկումների
համակարգման բաժնի պետ Կ. Մամիկոնյան, հեռ. 77-77-10 (*162)

Հավելված N 1
« 27 » 01 2022 թ.
N 730 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Սաղյանը և Կազմակերպության տնօրեն Արգամ Հովսեփյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել « 27 » 01 2022 թ. N 730 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 211608800 (երկու հարյուր տասնմեկ միլիոն վեց հարյուր ութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

**Հայաստանի Հանրապետության
գիտությունների ազգային ակադեմիա**

ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ՝ 900018005182
ՀՎՀՀ 00005673

Նախագահ՝ Ա.Սաղյան



(ստորագրություն)


**ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների
ազգային բյուրո» ՊՈԱԿ**

ք. Երևան, Իսակովի պող. 24
Երևանի թիվ 1 ՏԳԲ
ՀՀ՝ 900018005588
ՀՎՀՀ՝ 01836525

Տնօրեն՝ Ա.Հովսեփյան



(ստորագրություն)


Փաստաթղթի նախապատրաստման
համար պատասխանատուներ՝

Տնօրենի տեղակալ ֆինանսական և տնտեսական հարցերի գծով Խ.Աբաջյան, հեռ. 77-77-10 (*222)

Իրավաբանական բաժնի պետ Է.Տիտանյան, հեռ. 77-77-10 (*129)

Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ - գլխավոր հաշվապահ Ռ. Պապիկյան, հեռ. 77-77-10 (*117)

Գիտական հետազոտությունների և տեխնիկական փորձարկումների
համակարգման բաժնի պետ Կ. Մամիկոնյան, հեռ. 77-77-10 (*162)

Առաջադրանք

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության
ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը՝

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) գործունեության՝ փորձագիտության բնագավառում գիտամեթոդաբանական, գիտահետազոտական, գիտագործնական, գիտափորձնական-վերլուծական, գիտաուսումնական աշխատանքների կատարման ապահովմանը նպատակաուղղված միջոցառումների իրականացում:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները՝

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում իրականացվելիք աշխատանքներին ներկայացվող հիմնական պահանջներն ըստ էության համապատասխանում են կազմակերպության կանոնադրությամբ ամրագրված գործունեության հիմնական նպատակներին.

-իրավասու մարմինների կողմից նշանակված փորձաքննությունների ապահովմանն ու բարելավմանը նպատակաուղղված գիտահետազոտական, գիտատեխնիկական, գիտափորձնական աշխատանքների կազմակերպում և իրականացում,

-դատական փորձագիտական հետազոտությունների մեթոդական միասնականությունն ապահովելու նպատակով հետազոտությունների գործող մեթոդիկաների համակարգում, նորերի մշակում, դրանց փորձարկում և գործածության համար երաշխավորում,

-հանցավորություն ծնող պատճառների ու պայմանների ուսումնասիրում, հանցագործությունների կանխարգելմանն ուղղված կոնկրետ միջոցառումների մշակում և իրավասու մարմինների համար վերջիններիս ներդրման հետ կապված համապատասխան առաջարկությունների նախապատրաստում և այլ ուղղություններով քրեաբանական հետազոտությունների կազմակերպում և իրականացում,

-քրեական հետապնդում և արդարադատություն իրականացնող մարմինների կողմից նշանակվող փորձաքննությունների իրականացման ոլորտում ժամանակակից գիտափորձնական մեթոդների, գիտատեխնիկական միջոցների մշակում, փորձարկում և ներդրում,

-քրեաբանական հետազոտությունների իրականացման համար անհրաժեշտ վիճակագրական, հոգեբանական, քաղաքագիտական, սոցիոլոգիական և հասարակական այլ գիտությունների բնագավառներում հարցումների, մշակումների,

վերլուծությունների կազմակերպում,

-փորձաքննությունների համար ելակետային տվյալներ ձեռք բերելու պարտականություններ և փորձաքննություններ նշանակելու լիազորություն ունեցող իրավասու մարմինների աշխատողների ուսուցում և վերապատրաստում կազմակերպելու նպատակով համապատասխան գիտաուսումնական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ թեմաներով ծրագրեր-սեղմագրերի մշակում և ներդրում,

-փորձագիտության բնագավառի մասնագետների վերապատրաստման և կատարելագործման նպատակով համապատասխան գիտաուսումնական աշխատանքների իրականացում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նրանց որակավորման հավաստման հետ կապված հարցերի մշակում և հարցաշարերի կազմում:

4. Աշխատանքի բովանդակությունը՝

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը 2022 թվականի ընթացքում նախատեսում է առաջնահերթ իրականացնել հետազոտական աշխատանքներ (գիտամեթոդաբանական, գիտահետազոտական, գիտագործնական, գիտափորձնական-վերլուծական և գիտաուսումնական), այդ թվում՝ գիտաժողովների և համաժողովների մասնակցություն, սեմինարների իրականացում՝ նպատակաուղղված ձեռքբերված գիտելիքների ընդլայնմանը (կիրառմանը) և նոր գիտելիքների ստացմանը (կիրառմանը): Կազմակերպությունում համաձայն հաստատված կառուցվածքի և հաստիքացուցակի 32 փորձագիտական տեսակների շրջանակներում գործելու են 18 փորձագիտական բաժիններ (ֆիզիկատեխնիկական հետազոտությունների և քիմիական, սննդամթերքի և խմիչքների, էկոլոգիական, հողագիտական և կենսաբանական, տնտեսագիտական և հաշվապահական, շինարարատեխնիկական, ճարտարագիտատեխնիկական, ապրանքագիտական, ձգաբանական, հետքաբանական, ֆոտոտեխնիկական, դիմանկարային, տեսա- և աուդիոձայնագրական, ձեռագրաբանական, հեղինակային և փաստաթղթաբանական, ՃՏՊ հանգամանքների, տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի և տրանսպորտահետքաբանական, պայթյունատեխնիկական և հրդեհատեխնիկական, մշակութաբանական, դատաբժշկական, համակարգչատեխնիկական, հոգեբանական և դեպքի վայրի) իրագործելով դատական փորձաքննությունների կազմակերպման և կատարման գիտական և մեթոդական ապահովումը՝ ուղղված ձեռքբերված գիտելիքների ստացմանը (կիրառմանը) դատական փորձաքննությունների ժամանակակից գիտական պատկերացումներին համապատասխան մեթոդների կիրառմամբ՝ ապահովելով դատափորձագիտական բնագավառի ենթակառուցվածքների պահպանումն ու զարգացումը: 2022 թվականի ընթացքում իրագործվելու են նաև ուսուցման, վերապատրաստման և որակավորման բարձրացման աշխատանքների գիտական ապահովումը, ինչպես նաև քրեաբանական գիտահետազոտական աշխատանքները՝ ուղղված Հայաստանի Հանրապետությունում հանցավորության և դրա առանձին տեսակների պատճառների և նպաստող պայմանների, դրանց կրիմինոլոգիական և վիկտիմոլոգիական գործոնների բացահայտմանն ու կանխարգելմանը: Նշված աշխատանքները նպատակաուղղվելու են նաև հայ-ամերիկյան (INL) միջկառավարական

ծրագրի շարունակականությունն ապահովելուն:

Այսպիսով, Կազմակերպությունում 2022 թվականի ընթացքում իրականացվելու են գիտամեթոդաբանական, գիտահետազոտական, գիտագործնական, գիտափորձնական-վերլուծական և գիտաուսումնական բնույթի հետևյալ հիմնական աշխատանքները.

- **Գիտամեթոդաբանական և գիտահետազոտական բնույթի աշխատանքներ.**

2022թ-ի ընթացքում Կազմակերպությունն ակնկալում է գիտական գործունեության կազմակերպման արդյունավետության շարունակական բարձրացմամբ իրականացնել փորձագիտական նեղ-մասնագիտական ուղղությունների զարգացման, եղած հնարավորությունների պահպանման, կատարելագործման և նորարարական մոտեցումների ներդրման աշխատանքները:

Կազմակերպության գիտական գործունեություն իրականացնող անձնակազմի կողմից նախանշվել են դատական փորձագիտության, քրեագիտության և քրեաբանության բնագավառներին առնչվող մի շարք նոր գիտամեթոդաբանական և գիտահետազոտական բնույթի աշխատանքներ՝ ուղղված ձեռքբերված գիտելիքների ընդլայնմանը (կիրառմանը) և նոր գիտելիքների ստացմանը (կիրառմանը), այդ թվում՝

-«Առանձին տեսակի գույքերի առանձնահատկություններից ելնելով ըստ մշակվածքների տեսակների դրանց արժեքների պարզման համար համապատասխան գործակիցների կիրառման գիտական հիմնավորումը՝ մեթոդաբանության կատարելագործմամբ» /թեմայի ղեկավար՝ ապրանքագիտական փորձաքննությունների բաժնի պետ/,

-«Ֆինանսատնտեսագիտական փորձաքննությունների շրջանակներում ընկերության շուկայական արժեքի որոշման մեթոդաբանության բարելավման և տեղայնացման ուղիները» /թեմայի ղեկավար՝ գիտական հետազոտությունների և տեխնիկական փորձարկումների համակարգման բաժնի պետ /,

- «Մտավոր սեփականության օբյեկտների, մասնավորապես՝ ապրանքային նշանների արժեքների պարզման արդյունավետ ուղիների մշակումը, մեթոդաբանության կատարելագործումն ու կիրառման առանձնահատկությունները ՀՀ-ում» /թեմայի ղեկավար՝ ապրանքագիտական փորձաքննությունների բաժնի փորձագետ/,

-«Հայաստանի Հանրապետությունում տարածված միևնույն բնակլիմայական որոշ տարածքներում աճող մերկասերմ և ծածկասերմ ծառերի առանձին տեսակների աճի ինտենսիվության գնահատումը և տարբերակող հատկանիշների գիտական հիմնավորումը» /թեմայի ղեկավար՝ հողագիտական և կենսաբանական փորձաքննությունների բաժանմունքի փորձագետ/,

- «Անձի դեմքի ընդհանուր և մասնավոր հատկանիշների համեմատական հետազոտման հիմնական բնութագրիչների տվյալների բազաների ձևավորումը՝ նկարագրական եղանակով դիմանկարային նույնականացման մեթոդաբանության մշակման և ներդրման նպատակով» /թեմայի ղեկավար՝ ֆոտոտեխնիկական, դիմանկարային, տեսա- և աուդիոձայնագրական փորձաքննությունների բաժնի պետ/,

-«Շինարարատեխնիկական փորձաքննությունների բնագավառում նոր սերնդի չափագրող տեխնոլոգիաների ներդրմամբ փորձագիտական հետազոտությունների արդյունավետ ուղիների իրականացման և մեթոդաբանության մշակումը» /թեմայի ղեկավար՝ շինարարատեխնիկական փորձաքննությունների բաժնի պետ/,

- «Արգելակման կամ առանց արգելակման պայմաններում դեպքի վայրում թողնված անվադողերի հետքերով կառավարումը կորցրած տրանսպորտային միջոցի արագության պարզման մեթոդաբանության մշակումն ու կիրառման առանձնահատկությունները» /թեմայի ղեկավար՝ ՃՏՊ հանգամանքների, տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի և տրանսպորտահետքաբանական փորձաքննությունների բաժնի պետ/,

-«Վիրաբուժական բնագավառի բժշկական օգնության և սպասարկման դեֆեկտների ու անբարենպաստ ելքերի միջև պատճառահետևանքային կապերի փորձագիտական գնահատականը» /թեմայի ղեկավար՝ դատաբժշկական փորձաքննությունների բաժնի պետ/,

-«Բնակչության ներտնային գազասպառման համակարգերում առկա սարքավորումների շահագործման ընթացքում անվտանգության տեխնիկայի կանոնների և շինարարական նորմերի խախտումների հետևանքով տեղի ունեցած դեպքերի պատճառների և նպաստող գործոնների վերլուծության հիման վրա դրանց կանխարգելման արդյունավետ ուղիների մշակումը» /թեմայի ղեկավար՝ ճարտարագիտատեխնիկական փորձաքննությունների բաժնի փորձագետ/,

-«Քիմիկոտոքսիկոլոգիական հետազոտություններում գոլորշիացման համակարգի համակցմամբ գազ-քրոմատոգրաֆիական մեթոդով արյան և մեզի փորձանմուշներում ցնդելի նյութերի հայտնաբերման և քանակական որոշման հետազոտական մեթոդի մշակումը՝ հավաքագրված փորձարարական տվյալների վերլուծությունների հիման վրա» /թեմայի ղեկավար՝ տոքսիկոլոգիական (թունաբանական) փորձաքննությունների բաժանմունքի պետ/,

-«Փաստաթղթի վրայից մարդու ձեռքի քրտնաճարպային հետքերի երևակման առանձնահատկությունների և քրտնաճարպային հետքերում առկա առանձին նյութերի հետազոտությունը «Projectina Docustat DS-210» սարքի և «IR Prestige-21 FTIR» մոդելի սպեկտրոֆոտոմետրի կիրառմամբ՝ գործիքային նոր մեթոդաբանության մշակմամբ նույնականացման համար պիտանի հատկանիշների վերհանման նպատակով» /թեմայի ղեկավար՝ փաստաթղթաբանական փորձաքննությունների բաժանմունքի պետ/,

-«ՀՀ-ում իրացվող կաթնաթթվային սննդամթերքի որակի և անվտանգության պահանջների համապատասխանության վերաբերյալ փորձագիտական հետազոտությունների առանձնահատկություններն ու արդյունքների գնահատումը՝ տվյալ ոլորտը կանոնակարգող ՀՀ և ԵՏՄ տարածքում գործող նորմատիվային փաստաթղթերի կարգավորումների համատեքստում» /թեմայի ղեկավար՝ սննդային փորձաքննությունների բաժանմունքի փորձագետներ/,

-«Բջջային հավելվածներով իրականացված նամակագրության փոփոխման հատկանիշների հետազոտման և հետքերի հայտնաբերման առանձնահատկություններն ու մեթոդական նոր մոտեցումների նախանշումը» /թեմայի ղեկավար՝ համակարգչատեխնիկական փորձաքննությունների բաժնի պետ/,

-«ՀՀ բնահողային առանձին գոտիներում ծանր մետաղների սահմանային թույլատրելի (ֆոնային) կոնցենտրացիաների տվյալների բազայի ձևավորման գիտականորեն հիմնավորվածությունների նպատակով՝ տեխնաձին աղտոտման ազդեցության գնահատմանն ուղղված համալիր փորձաքննություններում կիրառման նպատակով» /թեմայի ղեկավար՝ ֆիզիկատեխնիկական հետազոտությունների և քիմիական փորձաքննությունների բաժնի փորձագետ/,

-«Դատահոգեբանական փորձաքննություններում անձի հոգեբանական առանձնահատկությունների գնահատման մեթոդաբանության մշակումն ու առավել ամբողջական արդյունքների ապահովմանն ուղղված հետազոտական թեստերի փաթեթների ձևավորման գիտական հիմնավորումը» /թեմայի ղեկավար՝ հոգեբանական փորձաքննությունների բաժնի պետ/:

Հարկ է նաև նշել, որ 2022թ-ին շարունակվելու են գիտամեթոդաբանական և գիտահետազոտական բնույթի աշխատանքների իրականացումը նախորդ տարիներին նախանշված մի շարք ուղղություններով, այդ թվում՝

-«Հնագիտական բնագավառի փորձաքննությունների ժամանակակից տեսակներով հետազոտությունների կատարման առանձնահատկությունների վերհանումն ու տվյալների վերլուծության արդյունավետ մոտեցումների մշակումը» /թեմայի ղեկավար՝ մշակութաբանական փորձաքննությունների բաժնի պետ/,

-«Հայատառ ազատ նմուշների հետազոտման առանձնահատկություններն ու դերը ձեռագրի ընդհանուր և մասնավոր հատկանիշների հայտնաբերման, նաև համեմատական հետազոտությունների իրականացման միջոցով դիտավորյալ փոփոխված ձեռագրով կատարված փորձառական նմուշների պարզման նպատակով» /թեմայի ղեկավար՝ ձեռագրաբանական, հեղինակային և փաստաթղթաբանական փորձաքննությունների բաժնի պետ/,

-«Շրջակա միջավայրի վրա փոքր ՀԷԿ-երի ազդեցության գնահատման առանձնահատկությունները և ազդեցության նվազեցման արդյունավետ մոտեցումների մշակումը» /թեմայի ղեկավար՝ էկոլոգիական փորձաքննությունների բաժանմունքի պետ/,

-«Ծակած-կտրած վնասվածքների հետքաբանական հետազոտության իրականացման և արդյունքների գնահատման առանձնահատկությունները կտորի գործվածքի բնույթով և խտությամբ պայմանավորված» /թեմայի ղեկավար՝ հետքաբանական փորձաքննությունների բաժնի պետ/,

-«Ընտանեկան բռնության վրա ազդող քրեաբանական և վիկտիմոլոգիական գործոնների բացահայտումը և հետազոտությունը» /թեմայի ղեկավար՝ քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի սոցիոլոգ/,

-«2015-2020թ-ին կատարված հրդեհատեխնիկական փորձաքննությունների արդյունքների համալիր վերլուծությունը և դրանց արդյունավետության բարձրացման ուղիների մշակումը հրդեհի վայրի ապահովման գործոնների ազդեցության գնահատման համատեքստում» /թեմայի ղեկավար՝ պայթյունատեխնիկական և հրդեհատեխնիկական փորձաքննությունների բաժնի պետ/,

-««SERATEC PMB» թեստի միջոցով դաշտանային և դիակային արյան մեջ D-դիմերի հայտնաբերման մեթոդի տեղայնացման, կիրառման և արդյունքների գնահատման առանձնահատկությունները դատակենսաբանական հետազոտությունների

բնագավառում» /թեմայի ղեկավար՝ կենսաբանական հետքերի փորձաքննությունների բաժանմունքի պետ/,

-«Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում աճող կանեփի բույսերի հետազոտման արդյունքների համալիր վերլուծությունը՝ տվյալների հավաքագրումով և քարտեզագրումով, ելնելով բույսի վեգետացիոն շրջանից և մշակումից, ինչպես նաև կանեփի բույսի մեջ պարունակվող կանաքինոիդային շարքի ալկալոիդների, այդ թվում նաև՝ տետրահիդրոկաննաբինոլի քանակությունից» /թեմայի ղեկավարներ՝ թմրանյութերի, հոգեմետ և թունավոր նյութերի փորձաքննությունների բաժանմունքի պետ և հողագիտական և կենսաբանական փորձաքննությունների բաժանմունքի պետ/,

-«Գազավառոդային շիթի զարգացման և կրակոցի արգասիքների նստեցման ու դրանց հետազոտման արդյունքների գնահատման առանձնահատկությունները բազմաշերտ արգելքների վրա «ԱԿ-74» և «ԱԿՍ-74Ու» տեսակի ինքնաձիգներից կրակոցների ժամանակ» /թեմայի ղեկավարներ՝ ձգաբանական փորձաքննությունների բաժնի պետ, պայթյունատեխնիկական և հրդեհատեխնիկական փորձաքննությունների բաժնի պետ/,

Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագրի (հաստատված է ՀՀ կառավարության 27.03.2008թ.-ի № 1039-Ն որոշմամբ) 10-րդ կետի 47-րդ ենթակետով նախատեսված միջոցառումներն իրականացնելու նպատակով ՀՀ կառավարության 11.06.2009թ.-ի № 638-Ն որոշմամբ Կազմակերպության կազմում գործող Քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) կողմից ամփոփվելու է 2022 թվականին կատարվող քրեաբանական հետազոտությունների շրջանակներում Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների ապօրինի շրջանառության ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ և 268-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գիտահետազոտական աշխատանքների արդյունքները: Ստացված տվյալների հիման վրա նախատեսվում է մշակել և ներկայացնել թմրամիջոցների ապօրինի շրջանառության կանխարգելմանը նպաստելուն վերաբերող հիմնավորված առաջարկներ, միևնույն ժամանակ սոցիոլոգիական վերլուծությունների հիման վրա նախատեսվում է մշակել ՀՀ-ում թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի իրավիճակի վերահսկողության վերաբերյալ մոդել: Իրականացվելու է նաև ընտանեկան բռնության կանխարգելմանն ուղղված առաջարկությունների մշակման նպատակով ոլորտի իրավասու աշխատակիցների շրջանում փորձագիտական հարցումներ՝ այդ ուղղությամբ հետագա աշխատանքների առավել ընդգրկուն պլանավորման և իրականացման համար:

2022թ-ին նախատեսվում է ուսումնասիրել վերջին 5 տարվա կտրվածքով ընտանեկան բռնության վիկտիմոլոգիական գործոնների վերաբերյալ պաշտոնական վիճակագրության տվյալները՝ նպատակ հետապնդելով վերլուծության արդյունքում բացահայտել քննարկվող խնդրի մակարդակը, կառուցվածքը, զարգացման միտումները և շարժընթացը: Նախատեսվում է նաև աշխատանքներ իրականացնել բացահայտելու ընտանեկան բռնությունների պաշտոնական վիճակագրական ցուցանիշներում կատարված փոփոխությունների պատճառահետևանքային կապերը՝ պայմանավորելով ներքին և արտաքին, անձնական և աշխատանքային ու այլ գործոններով:

2022թ-ի ընթացքում Կազմակերպությունում շարունակվելու են համագործությունը միջազգային դատափորձագիտական և գիտական առաջատար կենտրոնների հետ, ինչը թույլ կտա Հայաստանի Հանրապետությունում բարձրացնել դատափորձագիտական բնագավառում կատարվող աշխատանքների արդյունավետությունը և ստացվող արդյունքների արժանահավատությունը՝ օգտագործելով նաև դատական փորձաքննության ժամանակակից մեթոդներն ու հնարավորությունները:

Կազմակերպությունը, հանդիսանալով Դատափորձագիտական ինստիտուտների եվրոպական ցանցի (ENFSI) լիիրավ անդամ, շարունակաբար մասնակցելու է «Փորձագիտական աշխատանքային խմբեր»-ի (FWG) աշխատանքներին, ինչպես նաև ENFSI-ի տարեկան համաժողովին և կազմակերպվող այլ աշխատանքներին: 2022թ-ին նախատեսվում է շարունակել միջազգային պրակտիկայում ընդունված փորձագիտական մեթոդների և մեթոդիկաների ձեռքբերման և դրանց ներդրման ուղղությամբ կատարվող աշխատանքները, ինչը մեծապես կնպաստի իրականացվող փորձաքննությունների որակի շարունակական բարելավմանը և արդյունքների հավաստիության բարձրացմանը: Դատափորձագիտական ինստիտուտների եվրոպական ցանցի (ENFSI) հետ համագործակցության շրջանակներում 2022թ. ընթացքում նախատեսվում է նաև շարունակել աշխատանքները ENFSI-ի կողմից մշակված լավագույն փորձի ձեռնարկների (Best Practice Manual, (BPM)) տվյալների տեղայնացման ապահովման ուղղությամբ:

- **Գիտագործնական բնույթի աշխատանքներ.**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատական փորձաքննությունների իրականացման գործընթացն իրենից ներկայացնում է կոնկրետ դեպքում համապատասխան հատուկ գիտելիքների կիրառմամբ իրականացվող գիտագործնական աշխատանքի տեսակ, նախատեսվում է 2022թ-ին կազմակերպել մի շարք գիտագործնական սեմինարներ և մասնագիտական խորհրդակցություններ՝ նպատակաուղղված արդի փորձագիտական խնդիրների քննարկմանը, վերլուծությանն ու լուծման հնարավոր ուղիների նախանշմանը: Կազմակերպության գիտական գործունեություն իրականացնող անձնակազմի կողմից իրականացվելիք նշված աշխատանքներին, բացի Կազմակերպության համապատասխան աշխատողներից, նախատեսվում է առաջարկության դեպքում մասնակից դարձնել նաև այլ փորձագիտական կառույցների փորձագետների, ՀՀ ԳԱԱ համակարգում գործող ինստիտուտների համապատասխան մասնագետների, Հայաստանի Հանրապետության տարբեր բարձրագույն ուսումնական հաստատությունների և պետական այլ մարմինների, ինչպես նաև կազմակերպությունների ներկայացուցիչներին:

Գիտագործնական բնույթի աշխատանքների բարելավման և միջազգային գործընկեր կառույցների առաջավոր փորձին ծանոթանալու, կիրառվող մեթոդիկաների, հետազոտական տեխնոլոգիաների և դատական փորձաքննությունների ոլորտում կիրառվող արդի սարք-սարքավորումների հնարավորությունների մասին պատշաճ իրազեկման և նոր սարք-սարքավորումների ներդրման հնարավորությունների և անհրաժեշտության դիտարկման, առկա հնարավորությունների ընդլայնման նպատակով Կազմակերպությունը 2022թ-ին շարունակելու է ակտիվ մասնակցել միջազգային

գործընկեր կառույցների կողմից կազմակերպվող առցանց սեմինարներին, ինչպես նաև միջազգային գործընկեր փորձագիտական կառույցների կողմից կազմակերպվելիք տարբեր գիտական միջոցառումներին:

2022թ-ին Կազմակերպությունը շարունակելու է համագործակցությունը նաև ԱՊՀ մի շարք երկրների, Վրաստանի համանման դատափորձագիտական կառույցների հետ միջազգային կապերի ամրապնդման և փոխգործակցության ընդլայնման ուղղությամբ՝ նպատակ ունենալով զարգացնել Կազմակերպության գիտամեթոդական հնարավորությունները, մասնավորապես՝ կնքված երկկողմանի համաձայնագրերի շրջանակներում նախատեսվում է քննարկել դատափորձագիտական ոլորտի գործնական խնդիրների լուծման, տեղեկատվական տվյալների փոխանակման, ինչպես նաև գիտական և փորձագիտական տեխնոլոգիաների մշակման հարցերը:

Կազմակերպությունը գիտագործնական բնույթի աշխատանքների շրջանակներում 2022թ-ի ընթացքում նախատեսում է նաև շարունակել մասնակցությունը N 545 «Դատափորձաքննության» Միջպետական տեխնիկական կոմիտեի աշխատանքներին՝ մասնակցելով միջպետական ստանդարտների նախագծերի մշակման գործընթացին:

